



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄՈՒՐ ՏՂՈՅԸ ԱՐ ԻՆՏԻ ԳՄՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՏԵՄԲԵՐ 1, 1883

ԹԻՒ 11



ԼՈՒԹԵՐ ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼԻՍԻ

ԼՈՒԹԵՐ

Այս ամիս բոլոր Գերմանիա կը տօնէ Լուիսէրի ծննդեան 400երորդ տարեդարձը: Արդէն այս նպատակաւ

երկու անդ մասնաւոր տօներ կատարուեցան, բայց այս ամիս մեծ պատարաստութիւններ եղած են ընդհանուր կերպով պատուելու մեծ Բարեկարգչին յիշատակը: Կայսրն, աշխուականք,

գիտուն ուսուցիչք և հասարակ ժողովուրդը պիտի մասնակցին հանդէսներուն:

Սակայն Լուիսէրի յիշատակը Գերմանացոց համար միայն սիրելի չէ, բու-

լոր քաղաքակրթեայ աշխարհ չնորհապարա է անոր, վասն զի համայն աշխարհ օգուտ քաղած է Լուծէրէ: Նոյն իսկ անոնք որ չեն ընդունիր Լուծէրի կրօնական մասնաւոր վարդապետութիւնները, կ'ընդունին թէ Լուծէրի չնորհիւ էր որ մարդոց մտքերն արթնցան կրօնական թմբութենէ, ազատացան հոգևոր գերութենէ, և առաջնորդուեցան քննել մարդկային կենաց և գործոց վերաբերեալ մեծ ճշմարտութիւնները:

Լուծէր ծնաւ Սաքսոնիոյ իսէպէն քաղաքը յամի Տեառն 1483, նոյ. 10ին: Հայրն էր նախ երկրագործ, բայց յետոյ գնաց բնակիլ Մանսֆելտ, ուր եղաւ հանքագործ: Լուծէր երբ սկսաւ դպրոց երթալ, ստիպուած էր իւր պարուսար հայթայթել ուրիշ աղքատ տղոց հետ փողոցներն երգելով: Լուծէր այն ժամանակի նախնական դպրոցները կրկու չէր քաւարան, և վարժապետները բռնաւոր: Լուծէր էր ֆուրաի համարարանը մտաւ 1501 ին, և հին քաղ ուսաւ Լուտիւներէն և փիլիսոփայութիւն:

1505 ին մտաւ էր ֆուրաի մեծ նաստանը: Որովհետեւ շատ կրօնասէր էր, վասն զին մէջ խոտամբեր կեանք կը վարէր, և ամենէն մանր արարողութիւնները կը կատարէր ի բոլոր սրտէ: Անոր ջերմ փափաքն էր ինքզինքն ընդունելի ընել Աստուծոյ: Այս նպատակին համար համար հրաժարեցաւ ամէն տեսակ զուարճութիւններէ, և իւր անձին կու տար շատ տեսակ նեղութիւն և տանջանք: Լուծէր տեսաւ որ այս անձնուրացութեան բոլոր ջանքերն ընելով հանդերձ կարող չէր իւր սիրտը մաքրելու: Որչոյժ առելի կը ջանար սուրբ ընել իւր կեանքն, այնչափ առելի կը զգար իւր բարոյական թերութիւնները: Մինչ այս հոգևոր կուսով կը ճգնէր, և գրեթէ յուսահատելու վրայ էր, Սուրբ գրոց մէջ կարգաց սա խօսքը, «Սուրբար հուսաւորէն պիտի տարի»: Ասկէ առաջ Լուծէր կը ջանար ինքզինքը փրկել, իւր ջանքերով ըլլալ Աստուծոյ հաճելի, բայց անատեն տեսաւ թէ վերկուծեան համար Յիսուս Քրիստոսի ապաւինելու էր: Այս ճշմարտութեան

ճանօթութիւնը մեծ փափոխութիւն յառաջ բերաւ Լուծէրի վարուց և խորհրդոց մէջ, և հիմ եղաւ կրօնական բարեկարգութեան: 1508ին Լուծէր եղաւ փիլիսոփայութեան ուսուցիչ վիդգէնպէրկի համալսարանին մէջ: Իբրև ուսուցիչ կը սիրէր իւր աշակերտաց ուշադրութիւնը դարձունել Սուրբ գրոց վրայ, և ուսուցանել անոնց աստուածային ճշմարտութիւններ քան մարդկային դրութիւններ: Այն միջոցին Լուծէր գեւա չէր խորհեր Հռոմէական եկեղեցոյ դէմ ելլել:

1517ին, Լեոն Ժ. Պապը Հռոմայ մէջ Սուրբ Պետրոսի եկեղեցոյն շինութեան համար մեծագումար գրամ հաւաքել ուղղով արտօնութիւն տուաւ այլևայլ միանձանց, յորս էր Գէձէլ անուն ոմն, ներողութեան թուղթեր վաճառել Սաքսոնիոյ մէջ: Լուծէր բողոքեց այս սրբապղծութեան դէմ,


րի բարեկամին, փրեղ երկուս իշխանին, մարդիկն բռնեցին զնա և տարին բերդ մը, ուր մնաց տարի մը, և այս միջոցին գրադեցաւ Նոր կտակարանը թարգմանելու Գերմաներէնի:

Իւր անկարգութիւններ երևեցան անոր հետևողաց մէջ, և անոնք հակամէտ կ'երևէին ծայրայեղ և անկարգ միջոցներ ձեռք առնելու, Լուծէր անոնց մէջ երևեցաւ, և քարոզեց կարգ և կանոնի հնազանդել, չափաւորութենէ չհեռանալ, և ճանչնալ օրինաւոր իշխանութիւնը:

Լուծէր այնուհետև շատ ժամանակ տուաւ Սուրբ գիրքը թարգմանելու և քարոզներ և հոգևոր երգեր գրելու: Նաև մեծ ջանքեր ըրաւ ի նպատակ դատարարակութեան: Ամուսնացաւ 1523 ին, և մեռաւ 1546, փետ. 17 ին:

ԾՈՂՈՒ ՏԱԿ ԳՏՆՈՒԱԾ ԺԱՅՈՒՆԵՐԸ ԾԱԿՆԼՈՒ ԵՒ ՓՇԵՐԼՈՒ ԳՈՐԾԻՔ

Նիւ Եորք քաղաքին երկու կողմը կայ մէկ մէկ գետ, և այս երկու գետերը կը հասն Նիւ Եորքի ծոցը: Քաղաքին արևելեան կողմի գետը կը հասն Լանկ Սյընա Սառնա կոչուած ծոցէն օժապտոյտ չըջանալ: Այն տեղ ուր այս գետը կը հասնի Նիւ Եորք քաղաքին վերին մասը, կան ջուրին տակ տասնէն



ԺԱՅՈՒՆԵՐԸ ԾԱԿՈՒ ԳՈՐԾԻՔ

և իւր բողոքագրէն օրինակ մը դրկեց արքեպիսկոպոսին: Այս բողոքագրին վրայ երկար վիճաբանութիւն եղաւ, և վերջապէս 1520 ին Պապը Լուծէրի դէմ բանադրանաց կոնդակ մը հանեց, և Լուծէր այն կոնդակն սյրեց հրապարակաւ: Մանի մ'ամիս ետքը կարողս եւ, Գերմանիոյ երիտասարդութեա գաւորը, կանչեց ղ Լուծէր Ուորմնի մեծ ժողովոյ առջև, և 1521, ապրիլ ամսոյ մէջ, խեղճ փանականը գրեթէ առանց բարեկամի երևեցաւ մեծ ժողովոյ առջև, ուր կային կայսրն, իշխանագուռք, պետութեան առաջնին, եկեղեցոյ բարձրատիճան պաշտօնեայր և մեծ բազմութիւն ժողովրդեան: Ժողովը պահանջեց Լուծէրէն ետ առնուլ իւր վարդապետութիւնները, բայց նա համարձակութեամբ պատասխանեց թէ չկրնար ետ առնուլ զանոնք մինչև սր ցուցուին թէ սխալ են: Մեծ ժողովը գտաւ պարտեց զնա, և անոր կեանքը մեծ վտանգի մէջ էր: Ետ դառնալու ատեն ճամբան Լուծէ-

մինչև տասն և հինգ ուր խորը ժայռեր: Որովհետև այն տեղէն անցնող նաւերէն ոմանք շատ խոշոր են, և 20էն մինչև 25 ուր խորութեամբ կը մտնեն ջուրին մէջ, այն ժայռերն ի վաղուց ի վեր մեծ արգելք և վտանգ էին անցնող նաւերուն, և շատ սարխներէ ի վեր խնդիր եղած էր թէ ինչպէս կարելի էր վերցնել ջուրին տակ այնչափ խոր թարցուած ժայռերը: Այս ժայռերը վերցունելու գործը դժուար էր նաև սա պատճառաւ որ այն տեղ ուժգին հոսանք կայ, և այն տեղէն անցնող նաւերը միշտ շատ են: Ժայռերը փշրելու համար քանիցս ձեռնարկութիւններ եղան, բայց այն ձեռնարկութիւնք անցաձող մնային: Նաև այն կէտէն անցնող նաւերը ժայռերը փշրելու համար գրուած գործ իքներուն զարնուելով կը խորտակէին զանոնք, և լուրտկաց ապահովութեան համար ձեռք առնուած միջոցներն անբաւարար էին եղան:

Յետոյ այն ժայռերը փշրելու գոր-

ժը յանձնուեցաւ Նիւթըն անուն զօրապետին: Այս անձը յաղթելու համար այն գ. ժուարութեանց որ ի գերեւ հանած էին իրմէ առաջ աշխատողներուն բոլոր ջանքերը, հնարեց նաւ մը որ էր միանգամայն նաւ և մեքենայի գործարան: Նաւը շատ ամուր շինուած է, և քովերէն ձգուած երկաթներ նաւերու բաղխմանց դէմ լաւ կը պաշտպանեն մեքենաներն որ այս նաւին մէջ են: Ժայռերը փշրելու գործը յառաջ կը տարուի կիսազնտած և ամանի մը միջոցաւ որ նաւուն մէջէն ջուրին յատակը կ'իջեցուի: Այս ամանը շինուած է երեսուն ոտք արամադ ծով հաստ երկաթէ, և անոր վերի և վարի կողմերը բաց են: Այս ամանին մէջէն կ'անցնին շատ մը երկաթեայ խողովակներ, որոց մէջ կը գործեն ժայռերը ծակելու համար գործածուած չաղափնէրը (պուրջու): Ամանն ունի նաև շատ զօրաւոր ուքեր որոնք շինուած են այնպէս որ կրնան երկարի կամ կարճը նալ, որպէս զի յարմար գան ծակուելու ժայռին անհարթ երեսին: Երբ ուքերը կը հաստատուին ժայռին վրայ, կը փակուին, և ամանը շիտակ կը բռնեն: Ամանը նաւին մէջտեղի ծակէն վեր կը հանուի կամ վար կ'իջեցուի շոգեշարժ մեքենայով մը: Նաւուն մէջտեղի ծակին վրայ շինուած է հաստատուն յարկ ուր կը գանուի շոգեշարժ մեքենայ մը որ կը բանեցունէ չաղափնէրը: Շաղափներն են 10 ոտք երկայն, և շոգեշարժ մեքենային կապուած են չուաններով: Շաղափներու վարի ծայրերն են խաչաձև, և $3\frac{1}{2}$ մաս երկայն: Շաղափներն երկու կամ երեք ոտք վեր հանուելէ ետքը կը ձգուին ժայռին վրայ, և ժայռին զարնուելով սակաւ առ սակաւ կը ծակեն զայն: Ժայռերուն վրայ ըստ պարագային 8 էն մինչև 12 ոտք խորութեամբ ծակեր կը բացուին, և ութ ժամ գործելէ ետքը չաղափները ժայռին բնութեան համեմատ 7 էն մինչև

10 ոտք խոր կը թափանցեն: Նաւը գործածելու եղանակը պարզ է: Նաւը չորս կողմէն խորիտներով կը հաստատուի այն ժայռին վրայ որ պիտի ծակուի: Ամանը վար կ'իջեցուի և կը հաստատուի այն տեղին վրայ ուր գործ պիտի տեսնուի: Սուղակ մը ջուրին տակ կ'իջնէ և ծակելու համար ժայռին յարմարագոյն կէտերը կ'որոշէ: Ժայռին վրայ ծակեր բացուելէն ետքը, ծակերը կը գոցուին փայտեայ խիցերով որպէս զի աւաղով և ցեխով չլեցուին: Խիցերն իրարու կապուած են չուանով, և վերջին խիցէն չուան մը կը հանուի ջուրին երեսը: Անտան ամանը վեր կը հանուի, և նաւը մէկ կողմ կը քաշուի: Յետոյ ուրիշ նաւակով մը հոն կը բերուին պայթուցիկ նիւթով լի փամ


Նիւթըն զօրապետն իւր հանձարեղ գիւտին համար շատ կը գովուի:

ՁԱՐՄԱՆԱԼԻ ԿԵՐՊՈՎ ԾԵՆՈՒԱԾ ԳԻՒՂ ՄԸ

«Պշխարհ լի է զարմանալի ժողովուրդներով» ըսած է մէկը, և շիտակ ըսած է: Մարդ փիլիսոփայ ըլլալու է բացարձեւ համար թէ ինչու այս պայպէս է:

Վէնէձուէլայի հիւսիսային կողմը Մարազէյայոց լճին մէջ կը տեսնուին Մարազէյայոց Հնդիկը կոչուած բնիկներ, որոց տուները և անական սփռութիւնները շատ տարօրինակ և հետաքրքրական են:

Լիճն է իւր 100 մղոն երկայն և 60 մղոն լայն, և այնպէս միացած է Վէնէձուէլայի մեծ ծոցին հետ, որ երկուքին ջուրերը գրեթէ մի են:



ԼՅՑ ՎՐԱՅ ԾԵՆՈՒԱԾ ՏՈՒՆ

ըր ծակելու համար գործածուած չաղափնէրը (պուրջու): Ամանն ունի նաև շատ զօրաւոր ուքեր որոնք շինուած են այնպէս որ կրնան երկարի կամ կարճը նալ, որպէս զի յարմար գան ծակուելու ժայռին անհարթ երեսին: Երբ ուքերը կը հաստատուին ժայռին վրայ, կը փակուին, և ամանը շիտակ կը բռնեն: Ամանը նաւին մէջտեղի ծակէն վեր կը հանուի կամ վար կ'իջեցուի շոգեշարժ մեքենայով մը: Նաւուն մէջտեղի ծակին վրայ շինուած է հաստատուն յարկ ուր կը գանուի շոգեշարժ մեքենայ մը որ կը բանեցունէ չաղափնէրը: Շաղափներն են 10 ոտք երկայն, և շոգեշարժ մեքենային կապուած են չուաններով: Շաղափներու վարի ծայրերն են խաչաձև, և $3\frac{1}{2}$ մաս երկայն: Շաղափներն երկու կամ երեք ոտք վեր հանուելէ ետքը կը ձգուին ժայռին վրայ, և ժայռին զարնուելով սակաւ առ սակաւ կը ծակեն զայն: Ժայռերուն վրայ ըստ պարագային 8 էն մինչև 12 ոտք խորութեամբ ծակեր կը բացուին, և ութ ժամ գործելէ ետքը չաղափները ժայռին բնութեան համեմատ 7 էն մինչև

փուշաներ որ 10 ոտք երկայն են: Սուղակը չուաններուն միջոցաւ կը գանէ խիցերը որ կը պահպանեն ծակերը, և հանելով զանոնք փամփուշաները կը գնէ անոնց տեղ, և այս փամփուշաներն մետաղեայ թելով մը կը միացուին երկարական մարակոցի մը որ նաւին մէջ է: Երբ ամէն բան պատրաստ է, նաւն ապահով տեղ մը կը տարուի, և փամփուշաներուն կրակ կը արուի, և այսպէս ժայռերը կը փշրին: Փամփուշաներուն կրակ արուած ատեն ժայռի կտորներն և ջուրը կը բարձրանան օդին մէջ մինչև 200 ոտք: Այս եղանակաւ բաւական ժայռեր փշրուած են, և գետին յատակն այնչափ մաքրուած է որ 26 ոտք ջուրին մէջ մտնող շոգեշարժը ապահովութեամբ կ'անցնին անկէ:

ըր մը, որ է Մարազէյայոց քաղաքն, և ունի վաճառականական բաւական մեծ կարևորութիւն: Լճին մէջ, արևելեան եզերքին մօտ կը գտնուին Մարազէյայոց Հնդիկը որ կը բնակին ջուրին մէջ ցիցերու վրայ հաստատուած պամպուէ գիւղ մը: Կը կարծուի թէ այս ժողովուրդը սերունդ է Վէնէձուէլայի բրնձիկներուն, և թէ ժամանակաւ քաղաքային պատերազմ կար բնիկներուն մէջտեղ, և պարտեալք ուքսորուեցան, կամ կտնու մտան իրենց նաւերը նեղուցէն դուրս ելլելով իրենց համար նոր թաղաւորութիւն մը գտնելու յուսով: Կ'ըսուի թէ ահաւոր փոթորիկ մ'ըլաւ, և զանոնք ստիպեց ետ երթալ լճին մէջ: Երբ փոթորիկը հանդարտեցաւ, անոնք իրենց նաւակներն իրարու կապեցին պամպուէ ձողերով,

